# ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ՏՈՆԱՑՈՒՅՑԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Ս.Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

*Ներկա իրականությունը բազմաթիվ գործնական խնդրիներ է առաջադրում կապված էթնիկ հարաբերությունների կարգավորման ու էթնիկ մշակույթի արժևորման հետ: Այսօր չկան ավանդական մշակութային շատ արժեքների վերագնահատման հստակ տեսանկյուններ, չափանիշներ, տարբերայնորեն վերածնվող ազգային ավանդույթների պահպանման ու զարգացման գիտական մեթոդներ ու գործուն մեխանիզմներ: Ուստի, մեր կապը հայրենամյակների քննություն բռնած սեփական արժեքների հետ մնում է արհեստականորեն խզված: Պատճառներից մեկն այն է, որ արդի ուղղագրական գիտությունն իր գործնական ուղղությունների մշակմանը համակարգված մոտեցում հանդես չի բերում այն թողնելով առանձին անհատների պատասխանատվությանը, անձնական նախաձեռնությանը և կարողությանը: Դա հետևանք է նաև նախորդ տասնամյակներում ազգագրության հանդեպ ոչ համարժեք պետական մոտեցման, ինչը և ինքնիրացիայով շարունակվում է այսօր:*

*Ազգային-պետական տոնացույցի ձևավորման խնդիրը ներկա ժամանակների կարևորագույն հիմնահարցերից է, որի լուծումը ձգձգվում է արդեն մեկ տասնամյակ: Մեր խորին համոզմամբ, տոնացույցի ձևավորման հիմքում չգնաք է փնտրել կամ հորինել որևէ նոր բան. պարզապես անհրաժեշտ է նրա հիմքում դնել ավանդական տոնացույցը՝ իբրև ժամանակի ժողովրդական (ոչ թե պետական, քաղաքական կամ կրոնական) բաժանման համակարգ, որը մեր ժողովրդի հոգևոր, մշակութային, քաղաքական ու բարոյական ողջ ժառանգության ընդհանրացումն է և կրում է մեր ազգային ինքնատիպության կնիքը: Տվյալ դեպքում խոսքը ակունքներին վերադառնալու, մշակութային ժառանգությանը տեր կանգնելու և բնականոն զարգացման արհեստականորեն խզված կապը վերականգնելու մասին է: Այս առումով բավական է գտնել ժողովրդին արդեն իսկ հարազատ և դեռևս պահպանված ավանդական մշակույթի արժեքավոր փշրանքները, համակցելով ամբողջացնել դրանք և պայմաններ ստեղծել ինքնավերարտադրման համար:*

*Ուստի հայոց ավանդական տոների վերականգնման խնդիրը դառնում է տոնացույցի ձևավորման հիմնախնդրի պրակտիկ լուծումներից մեկը: Այն մեզ ներկայանում է մի քանի տեսանկյուններով՝ 1. ընդհանրապես ավանդական արժեքների վերականգնման ու պահպանման անհրաժեշտության տեսական հիմնավորում, 2. առանձին տոների ու ավանդույթների մասնավոր արժևորում, 3. յուրաքանչյուր ավանդույթի (տոնի) վերածնման մեխանիզմի մատնանշում: Եթե առաջին տեսանկյունը քիչ թե շատ շոշափված է գիտական գրականության մեջ, և կյանքն ինքն է այսօր տրամաբանորեն թելադրում, ապա երկրորդը և երրորդը բոլորովին ուսումնասիրված չեն, նույնիսկ որպես հարցադրում ձևակերպված չեն: Ինչ վերաբերում է հարցի նախնական փուլի լուծումներին, ապա նախ և առաջ անհրաժեշտ է հստակեցնել համապատասխան մոտեցումները:*

Դասական ազգագրության տեսանկյունով, Հայոց ավանդական տոնացույցի գլխավոր տոները դիտվում են իբրև հեթանոսական բնապաշտական արմատներ ունեցող «հոգևոր արժեքներ» և դիտարկվում են գերազանցապես որպես ազգային հիշողության տարրեր, հոգևոր մշակույթի կարևոր բաղադրիչներ, որոնք գլխավորապես հիմք են ծառայում տեսական ընդհանրացումների, մշակույթի վաղ շերտերի լուսաբանման և ավանդական մշակույթի ամբողջացման համար: Սակայն այսօր այս մոտեցումը բավարար չէ ավանդական արժեքների նկատմամբ համապատասխան վերաբերմունք մշակելու առումով:

Այս տեսակետից բավական պերճախոս փաստ է ինչպես առանձին տոների վերաբերյալ ամբողջական ուսումնասիրությունների բացակայությունը, այնպես էլ ավանդութային տոների նկատմամբ առկա մոտեցումը, որը, մի կողմից՝ խիստ կամայական է, իսկ մյուս կողմից, միանշանակորեն ընդհանրացված (հեթանոսական, քրիստոնեական, ազգային, ապազգային)[1]: Այսպիսի ընդհանրացման սնանկությունը հատկապես բացահայտվեց ՀՀ խորհրդարանում, երբ գրչի մեկ հարվածով ժողովրդի գիտակցության մեջ և կենցաղում արմատացած այնպիսի տոներ, ինչպիսիք են Մայիսի 1-ը և Մարտի 8-ը, մերժվեցին: Դեռ ավելին, վերջինս, չգիտես որ տրամաբանությամբ, փոխարինվեց ավելի արհեստական և գրեթե օտար Ապրիլի 7-ով (կրոնական լեգենդը հիմք դարձավ ավանդույթ դարձած տոնական իրողությունը ժխտելու համար): Կամ, Մեծ Զատիկը, որն այսօր ամենամասսայական ու համընդունված տոնն է, որակվեց զուտ եկեղեցական, այն դեպքում, երբ իրապես եկեղեցական տոնը՝ Սուրբ Ծնունդը, ընդունվեց իբրև պաշտոնական պետական տոն[2]:

Մեր նպատակն է փորձել ոչ միանշանակ մոտեցմամբ հիմնավորել ավանդութային տոների՝ ազգային տոնացույցի հիմքը դառնալու հնարավորությունը և բացահայտել դրանց բազմաթիվ առնչությունները ինչպես մնայուն արժեքների, այնպես էլ ազգային զարթոնքով պայմանավորված ներկա ժամանակաշրջանի հետ: Մենք, իբրև խնդրի լուծման ելակետ, ընդունում ենք հետևյալ հիմնադրույթները.

1. Ցանկացած էթնո-մշակութային ավանդույթ, որը ծագում կամ ձևավորվում է որոշակի պատմական միջավայրում կոնկրետ պայմանների ազդեցությամբ, կարող է այլ պատմամշակութային միջավայրում դոյատևել միմիայն նոր ավանդույթների մեջ վերածնվելու միջոցով:

2. Նոր պայմաններում հնի ծագման գլխավոր ու բնական միջոցը ազգի հավաքական հիշողության թարմացումն է, որն իրականանում է պարզ համանմանությունների (ասոցիացիա) միջոցով: Այսինքն, երբ ժամանակակից հասարակական-քաղաքական կամ ազգային-մշակութային կյանքում կատարվող իրադարձությունը հիշեցնում է նախորդը՝ հարազատը, միանգամից բեկում մտցնելով նրա գիտակցության մեջ:

3. Վերոհիշյալ գործընթացի մյուս գործոնը (սուբյեկտիվ) առանձին սուբյեկտների կողմից (եկեղեցի, պետություն) էթնոմշակութային երևույթների ճանաչողական, գաղափարական, քաղաքական, ազգային,

---

[1] Վ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Ե., 1972, էջ 367:

[2] ՀՀ օրենքը տոների, տոնակատարությունների և հիշատակի օրերի մասին, ՀՀ ԴԽ, Ե., 1991 (Հայաստանի Հանրապետություն, 30. XI, 92):

համամարդկային արժեքների բացահայտումն է և դրանց տեսական ու պրակտիկ լուծումների առաջադրումը:

4. Կոնկրետ էթնոմշակութային արժեքը վերածնվել կարող է ոչ թե իր ամբողջական համակարգով, այլ որևէ առանձին ներքին կամ արտաքին հատկանիշով. հիմնական գաղափարով, խորհրդանիշով, հաճախ՝ ոգով, էությամբ, նույնիսկ միայն ավանդույթով:

5. Եվրոպական շատ երկրներում ազգային-ավանդական տոներից շատերը ճանաչված են իբրև պետական տոներ, և ընդհանրապես պետական տոնայույցն արտացոլում է տվյալ պետության էությունը՝ ազգային թե տարածքային, կրոնական թե աշխարհիկ, ինչպես նաև քաղաքակրթության նրա անցած փուլերը: Բացի այդ, մեր դեպքում, ազգային-պետական տոնացույցը պետք է ամբողջացնի նաև պետականության ընդհատական գոյության բոլոր փուլերն ու ձևերը, ընդհուպ մինչև պետականության ձևավորման ներկա ժամանակաշրջանի առանձնահատկությունը:

6. Ժողովրդական տոները ժամանակի ընթացքում, պետության բայակայության պայմաններում, եկեղեցու կողմից կարգավորվել են և «դարձել» եկեղեցական տոներ (ինչպես ընկալում են այսօր ժողովուրդը, խորհրդարանը)՝ հարմարեցվելով քրիստոնեական գաղափարաբանությանը: Կրելով գնրազանցապես աշխարհիկ բնույթ և պահպանելով ազգային ու համամարդկային շատ արժեքներ՝ դրանք այսօր կարող են կարգավորվել պետության կողմից և դառնալ ազգային-պետական:

7. Յուրաքանչյուր տոն խորհրդանշորեն արտացոլում է կոնկրետ ժամանակը՝ իր բոլոր թերություններով ու առավելություններով: Հետևաբար, իրական կյանքի գեղարվեստական արտացոլումը տոնական կյանքում կարող է հոգեբանական առումով կարևոր գործոն լինել նաև հասարակության առողջացման ճանապարհին:

Առանձին տոնի կոնկրետ վերարտադրությունը հնարավոր է միայն մի քանի պարտադիր գործոնների առկայության պայմաններում, օրինակ, ժամանակագրական կամ գաղափարական զուգահեռ (1918թ. մայիս – 1989թ. մայիս՝ կապված Առաջին հանրապետության ու նրա խորհրդանիշների հրապարակային ճանաչման, 1921թ. փետրվար – 1988թ. փետրվար՝ կապված ազգային-քաղաքական դարթոնքի հետ), «սրբազան տարածք» (թատերական հրապարակ), հիշարժան օր կամ իրադարձություն, որի կապակցությամբ առանց հատուկ հրավերի կամ այլ կազմակերպական լուծումների հավաքվելու ավանդույթ կա (Փետրվարի 20, Մեծ Ջատիկի օր, Ապրիլի 24, Մայիսի 28, Վարդավառի օր և այլն):

Այսօր ավանդական տոները վերապահորեն են ընդունվում կամ մարտնչողարար մերժվում: Մի դեպքում, փաստարկն այն է, որ մենք աշխարհիկ պետություն ենք, և դրանց կարգավորումը եկեղեցու խնդիրն է: Մյուս դեպքում, իբրև փաստարկ, ընդգծվում է մեր՝ քրիստոնյա ժողովուրդ լինելու հանգամանքը, և հեթանոսական տոներին տուրք տալը որակվում է որպես եկեղեցուն դեմ ինչ-որ բան: Հաճախ էլ, երբ միանշանակորեն ընդունվում են ազգային կամ ավանդական բնութագրումները, վկայակոչվում է արմատավորված այն թյուր տեսակետը, թե ազգայինը կամ ավանդականը չեն կարող լինել համամարդկային, որ դրանք նեղ են, սահմանափակ, ժամանակավրեպ և արդիական չեն:

Մանոթանալով յուրաքանչյուր տոնի կոնկրետ նկարագրությանը և փոքր-ինչ խորանալով նրա էության մեջ՝ նկատում ենք, որ վերոհիշյալ բոլոր

ընութագրումներն ու փաստարկները խիստ մակերեսային են. հարու-բերական և երբեմն՝ մտացածին: Իսկ էականն այն է, որ դրանք մեր սեփական էթնոմշակութային միջավայրում ձևավորված և ընդունված կայուն, կրկնվող կապերի ու մեխանիզմների կենդանի համակարգ են և հավերժական արժեքները (տվյալ դեպքում օբյեկտիվորեն ազգային) բոլոր ժամանակներում վերարտադրելու ու պահպանելու միակ միջոցն են: Դրանք ավանդական ժողովրդական տոներ են և, ժառանգված լինելով, տոնական ավանդույթի, սովորույթի ուժ ունեն, որովհետև իրենց «մշակութային համակարգով ու աշխարհայացքով ժամանակի ընթացքում քննություն բռնած»[3] տոներ են և կայուն համակարգով կենցաղավարել են ամբողջ XIX դարում և XX դարասկզբին, որն ազգագրական գրականության մեջ ընդունված է իբրև դասական ավանդական ժամանակաշրջան: Եվ ժողովրդական են, որովհետև ունեն ժողովրդական ակունքներ, և յուրօրինակ ընդհանրացումն են մեր ժողովրդի բնագիտական, տիեզերագիտական պատկերացումների, հայ էթնոսի սոցիալ-քաղաքական հարաբերությունների, բարոյահոգեբանական ու գեղագիտական ըմբռնումների:

Հայոց ավանդական տոները ձևավորվել են հազարամյակների ընթացքում պարզ ծիսային արարողություններից: Զարգացման տարբեր փուլերում դրանք կրել են համապատասխան փոփոխություններ՝ կապված ժամանակի առանձնահատկությունների հետ, չփոփոխելով հանդերձ իրենց ծագման ժամանակի ընդհանուր փիլիսոփայությունը (բնության, տիեզերքի, կնոջ պաշտամունք, սիրո, գեղեցկության, պտղի պաշտամունք, մարդ-բնություն, մարդ-հասարակություն, մարդ-մարդ հարաբերությունների կատարելության ձգտում, հնի ու նորի պայքար, տիեզերքի հավասարակշռության պահպանում):

Մեր նախնիները հազվագյուտ զգացողությամբ էին ընկալում իրենց շրջապատող իրականության այս կամ այն փոփոխությունը և յուրովի արժևորում այն: Այդպես են ծագել Բարեկենդանն ու Զատիկը, Համբարձումն ու Վարդավառը: Այսպիսի յուրահատուկ ընկալման արդյունքն է և Նավասարդը՝ հայոց հնագույն նոր տարվա տոնը, որն իր ծիսակարգով կենտրոնական տեղ է գրավում ավանդական տոնացույցում և իր ազդեցությունն է թողել գրեթե բոլոր տոների վրա (թվում է, թե ամբողջ տոնացույցը մի մեծ ու ամբողջական տոնի մասնատման արդյունք է): Մագելով իբրև նոր տարվա տոն՝ ժամանակի ընթացքում այն տեղաշարժվում է տարվա բոլոր եղանակների մեջ՝ արեգակնային օրացույցին համապատասխան՝, աստիճանաբար ձեռք բերելով նոր գծեր ու երանգավորում կապված մասնավորապես բերքի, բարիքի, առատության հովանավոր ուժերի պաշտամունքի, քաջ նախնիների հիշատակի, քաղաքական ու ազգային ինքնության գաղափարների հետ[3]: Վերջին երանգը պետականության կորստից ոչ շատ անց աստիճանաբար մարում է և գվարճախաղերի, ուժի ցուցադրության մրցախաղերի ձևով պահպանվում աշնանային Նավասարդի տոնի մեջ, ընդհուպ մինչև անցյալ դարի սկիզբը: Ավելի ուշ այս տոնը

---

[3] Զ.Խաչատյան, Դիտողություններ և առաջարկություններ «Տոների մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ (1991թ., ձեռագիր):

Հ.Ս.Բաղալյան, Օրացույցի պատմություն, Ե., 1970, էջ 51, Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Կ.Պոլիս, 1869, էջ 7, Գր.Բրուտյան, Հայոց տոմարի մի քանի հարցերի շուրջ, Հ. Ա. էջմիածին, էջ 63:

Ղևոնդ Ալիշան, Հուշիկք հայրենեաց հայոց, Հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 187:

համընկնում է հունվարմեկյան նոր տարվա հետ և վերջինիս փոխանցում իր նախնական ծիսակարգը՝ կապված տարեսկզբի, առաջին օրվա, Առաջինի հմայական գաղափարի հետ:

Այսօր գործող տոնացույցի գլխավոր տոներից անառարկելի են՝ Նոր տարին, Մեծ դատիկը, Մայիսի 28-ը, որոնցից երկուսն արդեն ավանդույթ են, իսկ երրորդը՝ վերածնված ու արդեն կայացած իրողություն: Սակայն, ի տարբերություն Զատկի տոնի, մյուս երկուսը չունեն հստակ ծիսակարգ, որն ամրագրի արժեքների որոշակի սեփական համակարգ: Դրանց տեսական բացակայությունը կարող է ժամանակի ընթացքում խարխլել այդ տոների հիմքերը և ձևախեղել դրանք, ինչպես, ասենք, վերջին մի քանի տարիներին բնատնական, ագրակցական բնույթի տոնը՝ Նոր տարին, Եվրոպական երկրների օրինակով արհեստականորեն լայն հրապարակային տոնահանդեսի վերածելու անհաջող փորձերը: Դրանք երբեք հաջողություն չեն ունենա մեր միջավայրում, քանզի կոպտորեն շրջանցում են մեզանում արմատացած այն ավանդույթը, ըստ որի, յուրաքանչյուր ոք այդ օրը, կեսգիշերին ջանում է լինել իր տանը՝ հարազատների, ազգակիցների, բարեկամ-հարևանների, հաճախ ընկերների շրջապատում, բայց բոլոր դեպքերում գերազանցապես տանը՝ այլ ոչ դրսում կամ հրապարակում, որն այս տոնի սրբազան տարածքը չէ (գոնե մեզ՝ հայերիս համար և գոնե ցայսօր): Մեր կարծիքով, այսօր անհրաժեշտ է ընդամենը ժամանակակից Ամանորի տոնակարգը հարստացնել ավանդական Նավասարդի տոնի գլխավոր գաղափարներով և որոշ ծես-խաղերի վերականգնման միջոցով:

Նոր տարին աշխարհաստեղծ, տիեզերաստեղծ տոն է: Այն արդյունք է մարդու կողմից արագընթաց ժամանակը կանգնեցնելու բուռն տենչի: Տոնի գլխավոր գաղափարը կյանքի ու աշխարհի նորոգումն է, վերաիմաստավորումը, ինքնամաքրումը: Վերջինիս միակ երաշխիքը հատուցումն է. հատուցում մեծին ու փոքրին, հատուցում պարտքի դիմաց, հատուցում արածի ու չարածի համար: Տոնի հիմնական էությունն իրական կյանքի (որը նման է քաոսի) կտրուկ, հրաշքով վերափոխումն է իդեալական կյանքի (տիեզերքի պես կատարյալ), ուր թագավորում են հավերժական արժեքները՝ սերը, բարությունը, անձնազոհությունը, հոգու շռայլությունը և այլն : Այս ամենի մարմնավորումը կոնկրետ գործողությունների մեջ (ամանորյա նվերների հանգանակում՝ ավանդական Դոտեկախի սովորույթի վերաձևման կամ եվրոպական «սանտա-կլաուսների» տարբերակով, տարվա Մարդկանց մեծարում, Տարեհացի, ձևավոր ծիսահացերի մեջ տարվա նշանի միջոցով «գուշակություն» ծես-խաղերի կազմակերպում, տոնածառի ձևավորում՝ Կենաց ծառի սկզբունքով և դրա «աճուրդի» ճանապարհով ավանդական քավորի ինստիտուտի վերականգնում) հնարավորություն կտա ոչ միայն ապահովել Ամանորի հայկական ինքնատիպությունը, պահպանել նրա էությունը, ոգին, այլև մասնակիորեն հավասարակշռել տարվա ընթացքում հասարակության տարբեր շերտերի միջև ստեղծված անհամամասնությունը:

Ինչ վերաբերում է Մայիսի 28-ի տոնակարգին, ապա այն, մեր կարծիքով, պետք է արտացոլի այսօրվա ռեալ հասարակական-քաղաքական իրողությունները և լինի ժամանակակից մշակութային ավանդույթների ժառանգորդն ու կրողը: Այս տեսակետից այն մեզ ներկայանում է իբրև պետականության տոն, որը ենթադրում է նաև կոնկրետ խորհրդանիշների նկատմամբ համապատասխան վերաբերմունքի պրակտիկ իրացում, ինչպես նաև՝ իբրև Ավարայրի, Սարդարապատի ու Արցախյան հերոսամարտերով

փաստված ազգային ոգու պաշտամունքի տոն, որն իր հերթին ենթադրում է այդ ոգու փառաբանում և այն մարմնավորող հերոսների հիշատակի հավերժացում:

Ժամանակակից պայմաններում զորահանդեսը և քաղաքացիական շքերթը գրեթե միակ համընդունված մշակութային մեխանիզմներն են, որոնք կարող են ժառանգորդը համարվել դեռևս հնագույն ժամանակներից եկող երկնային ուժերի հանդեպ հպատակության և երկրային դժվարությունների հաղթահարման ծեսերի: Ներկայիս տոնացույցում, որը, ի դեպ, ամբողջական ու հստակեցված չէ, մենք չունենք որևէ տոն, որի արարողակարգը ենթադրի շքերթի պարտադիր պայման, ինչը կարող է դառնալ Մայիսի 28-ի տոնի առանձնահատկությունը և ապահովել շքերթի՝ իբրև մշակութային արժեքի, վերարտադրությունն ու փոխանցումը սերունդներին:

Մայիսի 28-ը նոր ժամանակների թերևս միակ ազգային-քաղաքական տոնն է, որն անառարկելի է իբրև պետական տոնացույցի գլխավոր տոն, որովհետև ունի ոչ միայն հստակ ու ճանաչված գաղափար և այն մարմնավորող «լեգենդ», այլև՝ համընդունված խորհրդանիշներ, «սրբազան տարածք», կրկնվելու ավանդույթ և ժողովրդի հիշողության մեջ այսօր ամրագրված, ժամանակակից իրադարձության առիթով վերածնված ու արդեն կայացած օբյեկտիվ իրողություն է: Այն անտեսելու բոլոր փորձերը դատապարտված են:

Սակայն վերոհիշյալ տոնը, որքան էլ ժամանակակից, այնուամենայնիվ, վկայագրումն է նաև այլ պատմական ժամանակների: Հետևաբար, այն չի կարող լինել նորագույն ժամանակի միակ խորհրդանիշ տոնը: Վերջինս, մեր կարծիքով, դեռ չի կայացել, թեև եղել և կարծես անցյալ է թվում նորագույն ժամանակի այն հզոր հասարակական-քաղաքական իրադարձությունը, որը բեկում առաջացրեց մեր ժողովրդի գիտակցության մեջ, հեղաշրջեց մեր կյանքը և, թվում է, թե պետք է հնարավոր դարձներ իրեն համարժեք մշակութային ժառանգության վերածնումը: Ընթացող քաղաքական ուժերի բացակա վերաբերմունքի և վերը նշված այլ սուբյեկտիվ գործոնների հետևանքով բավականաչափ հասունացած պահը բաց թողնվեց:

1988թ. փետրվարյան ֆենոմենը, անկախ որևէ քաղաքական գնահատականից, ապահովեց ոչ միայն մեր ժողովրդի հավաքական միասնությունը տարածության մեջ, այլև անմիջական կապ ստեղծեց ժամանակի մեջ հուշ դարձած ավանդական արժեքների միջև: Այն մեզ հնարավորություն տվեց այդ արժեքներից մեկի՝ ավանդական հայոց Բարեկենդանի տոնի մեջ նշմարելու իր մշակութային զուգահեռը: Տոն, որն իր հնամենի արմատներից, բազմաշերտ կառուցվածքից, երբեմն մասսայականությունից դատ, արտահայտիչն ու կրողն է եղել ինչպես ժամանակի ոգու, այնպես էլ մեր ազգի հզոր ներուժի (գաղափարական, քաղաքական, սոցիալական, բարոյական): Այն միակն է հայոց ավանդական տոների մեջ, որը ոչ միայն չի ենթարկվել ժամանակի ավերիչ ուժին, այլև ինքն է ազդել, մասնավորապես, քրիստոնեական գաղափարաբանության և եկեղեցու ծիսակարգի վրա: Ընդունելով այն իբրև տոն՝ եկեղեցին, այնուամենայնիվ, նրա վերջին օրն ստիպված է եղել անվանել «Բուն բարեկենդան» և մտցնել եկեղեցական օրացույցի մեջ: Խորհրդային շրջանում Բարեկենդանը եղավ լավագույնս մոռացված տոնը, որովհետև այն չէր կարող այլափոխվել կամ որևէ մասնիկով պահպանվել միայն, այն պետք է լիներ կամ այնպիսին, ինչպիսին

էր, այսինքն՝ ունենար ժամանակի ոգու արտահայտիչը լինելու հնարավորությունը, կամ չպետք է լիներ ընդհանրապես:

Այս տեսակետից 1988թ. փետրվարյան օրերն իրենց էությամբ ամբողջապես համեմատվում են Հայոց Մեծ բարեկենդանի տոնին, որի հիմնական գաղափարը՝ Վերածնություն, կենդանություն, զարթոնք և բնույթը՝ բնապաշտական, կենսասիրական, խիստ համընկնում են մեր ժողովրդի արթնացման (ազգային-ժողովրդական շարժման հետ կապված) արդեն սկված, բայց դեռ չավարտված գործընթացի հետ: Տոնակատարության ժամանակը, ըստ գրավոր և բանավոր վկայությունների, նույնպես համընկնում է փետրվարի վերջերին՝ բնության զարթոնքի իրական ժամանակին: Բնության և ազգային զարթոնքի նման հազվագյուտ համընկնումը պարզապես ապշեցուցիչ է, և աններելի կլիներ նման պատեհությունը չնշանավորելը: Մանավանդ որ տոնի գաղափարական ու էական շատ հատկանիշներ խիստ այժմեական են և բնութագրական մեր ժամանակների համար: Մասնավորապես, նկատի ունենք հետևյալ մի քանի առնչությունները. 1. Վերագարթնող, կյանքի կոչվող բնության հետ նոր կյանքի էր կոչվում նաև մարդը, որպես կենդանական աշխարհի անբաժանելի մասնիկ: 2. Տոնի գլխավոր հատկանիշներից մեկն անհատին գործողության ազատություն շնորհելն էր կենցաղում: Այն, ինչ նա անկարող էր անել տարվա ընթացքում, իրավասու էր Բարեկենդանի օրերին: Այս առումով շատ հետաքրքրական է այն փաստը, որ «Բուն բարեկենդանի օրը», ժողովրդական պատկերացմամբ, փոխվրեժի օր էր, և ժողովուրդն այն անվանում էր «թարս օր»: Այդ օրը նահապետական կենցաղին հատուկ բոլոր սահմանափակումները, արգելքներն ու կաշկանդվածությունը մեկ օրով չեղյալ էին համարվում: Տեղի էր ունենում մեծերի ու փոքրերի, կանանց ու տղամարդկանց, հարուստների ու աղքատների, պաշտոնավորի ու ենթակայի դերի, պարտականությունների փոխադարձում: 3. Տոնի մյուս գլխավոր հատկանիշը սուր, ընդգծված աշխարհընկալումն էր, որն արտահայտվում էր, մասնավորապես, դիմակավորված ծես-խաղերում: Այդ խաղերի գլխավոր բովանդակությունը զավեշտական տեսարաններն էին և անհատի կերպարանափոխությունները, որոնցում ընդգծվում էր բարեկենդանյան տոնի հիմնական՝ հնի ու նորի պայքարի գաղափարը: Հատկապես տարածված էր արևելյան բռնապետի կերպարն ընդունելը և անհնթեթ հրամաններ տալը, ինչպես նաև հրապարակային «դատավարությունները», որոնք վերաբերում էին նախորդ տարվա չարագործությունների դատապարտմանը և հասցված վնասի փոխհատուցման երաշխիքների ստացմանը:

Այս ամենը, ինչպես տեսնում ենք, խիստ համահունչ են մեր օրերին և կարող են արտահայտվել ինչպես քաղաքական սատիրայի ու հումորի թատրոնների հրապարակային ելույթներով, համապատասխան ժանրի փառատոներով, անեկդոտների ու հումորի երեկոներով, այնպես էլ դիմակահանդեսներով:

Վերջին տարիների ազգային զարթոնքը հանգեցրեց նաև որոշ տոներ (Համբարձում, Վարդավառ) այս ու այնտեղ հապճեպորեն վերականգնելու փորձերի[6], որոնք, սակայն, հաջողություն չունեցան, այսինքն՝ չվերածվեցին

[6] Ս.Գ.Մելիքյան, Դաշտային ազգագրական նյութեր, տետր թիվ 11, Ե., 1992 - 1993, էջ 95:

ժամանակակից պայմաններում գործող մեխանիզմի՝ այս անգամ կապված բոլորովին այլ հանգամանքների հետ: Տվյալ դեպքում նկատի ենք առնվում այլ պատմաքաղաքական և սոցիալ-մշակութային միջավայրում գործող մեխանիզմը ամբողջական համակարգով, ներկա պայմաններում առանց փոփոխության վերածելու սին փորձերը: Նման մեխանիկական վերարտադրությունը հնարավոր է, լավագույն դեպքում, գիտական ու գեղարվեստական ստեղծագործություններում, ֆիլմերում, որի դասական օրինակը, թերևս, Թումանյանի հանրահայտ պոեմն է կամ Տիգրանյանի համանուն օպերան: Սակայն իրրև գործող տոն, իրրև կենդանի օրգանիզմ նման վերարտադրությունը անհեռանկար է: Այդ է պատճառը, որ Համբարձման և Վարդավառի տոների վերականգնման ուղղությամբ տարվող ջանքերը վերջին տարիներին ոչ միայն արդյունք չունեցան, այլև նպաստեցին դրանց արագ մարմանը և նույնիսկ առաջացրին դրանց արժեզրկման ռեալ վտանգ: Մինչդեռ, վերջիններս, ունենալով բնապաշտական, առարկայապաշտական ակունքներ և ոգեղեն հարուստ ժառանգություն, կարող են մեր ժամանակներում կարևորագույն ու հրատապ խնդիրներ լուծել (բնապահպանական, սոցիալ-մշակութային, գեղագիտական, հոգեբանական), եթե գտնվեն դրանց մարմնավորման ժամանակակից ձևերը:

Թեև ծիսակարգով ու ընդհանուր գաղափարներով այս տոները արտաքուստ թվացյալ նմանություն ունեն (բույսերի, ջրի, պտղի պաշտամունք), սակայն, առանձին գաղափարների սահմանազատումը, ինչպես նաև դրանց կոնկրետ վերաիմաստավորումը ժամանակակից ավանդույթների մեջ (Մաղկի տոն, Վարդավառյան դիցուհու ընտրություն ու մեծարում «միսս գեղեցկուհու» հայկական տարբերակով) հնարավոր կլինի առարկայորեն տարբերակել և պահպանել այդ տոների միջոցով մեզ փոխանցվող հարուստ մշակութային ժառանգությունը:

Վերոհիշյալ տոներին առնչվող մեխանիկական մոտեցումը հանդես է բերվում հաճախ նաև Նավասարդի (այս անգամ իրրև ազգային-քաղաքական ու պետական տոնի) նկատմամբ: Մասնավորապես առաջարկում են այն հատկապես օգոստոսի 11-ին վերականգնելու գաղափարը: Մի կողմ թողնելով այս գաղափարի հեղինակների անկեղծ մղումները՝ նկատենք, որ սուբյեկտիվ ցանկությունը և օբյեկտիվ պատմական ճշմարտությունը ինքնին բավարար չեն որևէ տոն վերստեղծելու համար:

Տոների ձևավորման ու զարգացման պատմությունը ցույց է տալիս (եթե, իհարկե, դրանք վարչական կամ քաղաքական միջոցառումներ չեն), որ բացառվում է որևէ գեղեցիկ օր ընտրելով (նույնիսկ պատմագիտորեն ճշգրիտ, բայց ժողովրդի գիտակցության մեջ ու նրա պրակտիկայում չամրագրված), անգամ գիտությանը ճշգրտորեն հայտնի ամբողջական ծիսակարգը ներկայացնելով՝ հռչակել կայացած տոն: Լավագույն դեպքում դա կլինի պարտադիր հանդիսություն, որի մասնակիցները կմնան իրրև պասիվ դիտորդներ: Այստեղ միայն ազգային-պատմական գիտակցությունը և սրբազան գաղափարը բավարար չեն տոնը վերակենդանացնելու համար: Բացակայում են կարևորագույն գործոններից մի քանիսը՝ ժամանակագրական համընկնումը այսօրվա կարևորագույն իրադարձության հետ, ժամանակակից ավանդույթի բացակայությունը և «սրբազան» տարածքը, որն այս կամ այն կերպ կապվեր այդ օրվա հետ: Թերևս 1990թ. օգոստոսի 23-ը իր նշանակությամբ (հռչակագրի ընդունում) դառնար մեզ անհրաժեշտ

իրադարձությունը, եթե, իհարկե, այսօրվա օգոստոս ամիսը լիներ այն հնարավոր օգոստոսը քաղաքական մթնոլորտի, ժողովրդական ու բնաէկոլոգիական պայմանների, մշակութային ավանդույթի, հնի ու նորի սահմանարաժանի առումով, կամ սուբյեկտիվ մղումներով գտնե ժամանակին ուշադրություն դարձվեր այդ օրվա խորհրդին:

Այս դեպքում նպատակահարմար է փնտրել և գտնել մոտ անցյալում ժողովրդի հավաքական հիշողության մեջ պահպանված այն տոնախմբություններն ու հիշարժան իրադարձությունները, որոնք կապված լինեն օգոստոս-հոկտեմբեր ամիսներին, և որոնց միջոցով հնարավոր լինի ապրեցնել այդ հնագույն՝ Նավասարդի տոնական ավանդույթն ընդհանրապես, ոգին և անվանումը մասնավորապես: Այդպիսիք, մեր կարծիքով, կարող են լինել «Բերքի տոնը», «Էրեբունի - Երևան» տոնակատարությունը և «Ոսկի աշունը», որոնց մասին հիշողությունը թարմ է այսօր, ինչպես նաև վերջին տարիներին մարզական կազմակերպությունների կողմից «Նավասարդյան խաղեր» սնցկացնելու ավանդույթը[7]: Այս ամենի զուգակցումը կարող է ստեղծել այն արդիական հողը, որի վրա հնարավոր կլինի վերապրեցնել այդ ամենահայկական ու հնագույն տոնը:

Ներկա ժամանակները բնորոշվում են հաճախ բավական ծայրահեղ մոտեցումներով այս կամ այն հարցի նկատմամբ, որով ոչ միայն արժեզրկվում են այդ հարցերն ինքնին, այլև զավեշտի են վերածվում դրանց լուծումները: Առանձին տոների պաշտոնական ճանաչման խնդիրը այս առումով բացառություն չէ: Մասնավորապես, խոսքը Սուրբ ծնունդի մասին է, որի ընտրությունը և հաստատումը իբրև պետական տոն, մեղմ ասած, անհասկանալի է և անտրամաբանական: Տվյալ դեպքում մենք գործ ունենք այնպիսի ֆենոմենի հետ, երբ հնարավոր է առկան, գոյություն ունեցողը, համընդունվածն անտեսելը և գոյություն չունեցողը հորինելը կամ, մեկ այլ տեսանկյունով, մարտնչող աթեիզմից միանգամից մարտնչող կրոնականության դիրքն ընկնելը: Այն, որ քրիստոնեությունը մեր ազգային պատմության, մեր մշակույթի ու պետականության մեջ հսկայական դեր է ունեցել, և նրա թողած ժառանգությունը մեր սեփականն է, ակնհայտ է: Մենք կարծում ենք նաև, որ ազգային-պետական տոնացույցը կարող է ունենալ այդ ժառանգությունը փոստող գոնե մեկ տոն: Բայց արդյո՞ք այդ տոնը Սուրբ ծնունդն է, որը մինչ վերջերս քիչ հայտնի և քիչ ընդունված էր Հայաստանում: Այն, իրապես, ավելի շատ հայ եկեղեցու տոնն է, քան հայ ժողովրդինը: Չէ՞ որ մենք այսօր էլ ունենք քրիստոնեական շրջանի ամենամեծ տոներից մեկը՝ Մեծ Զատիկը, որը ոչ միայն լավագույնս պահպանված է իբրև եկեղեցու տոն, այլև ամենաժողովրդականն ու համընդունվածն է, և որը նշելու ավանդույթն իր հզորությամբ համարժեք է միայն Նոր տարվա տոնը նշելու ավանդույթին, եթե ոչ ավելին:

Այս առնչությամբ մեկ տեսանկյուն ևս. Սուրբ ծնունդը, ըստ քրիստոնեական գաղափարախոսության, Քրիստոսի ծննդյան օրն է, և Հունվարի 6-ը՝ հայկական նոր տարվա սկիզբը: Այսօր, հետևաբար, մեր պաշտոնական տոնացույցում ունենք տարվա երկու սկիզբ. առաջինը հունվարմեկյան, երկրորդը՝ հունվարվեցյան: Տեսականորեն սա գուցե ընդունելի է, բայց պրակտիկ կյանքում նման զուգահեռն անընդունելի է, անտրամաբանական, հակասական և չի կարող տևական լինել: Կյանքն ինքը

[7] Նույն տեղում, էջ 67:

*կարճ ժամանակում կսրբագրի այդ հակասությունը. և գրանցից մեկը. անշուշտ. կմնա թղթի վրա: Սակայն ինչու աննրբանկատ. կոպիտ. ոչ գիտական մոտեցմամբ նսեմացնենք մեր սեփական հոգևոր. մշակութային արժեքները:*

## К ВОПРОСУ О ФОРМИРОВАНИИ НАЦИОНАЛЬНО-ГОСУДАРСТВЕННОГО КАЛЕНДАРЯ

С.Г.МЕЛИКЯН

Резюме

Национально-традиционные праздники формировались тысячелетиями. Причем, меняясь на этом протяжении, они все-таки сохраняли основную философию периода своего возникновения (культ природы, вселенной, человека, плодородия, красоты, любви, стремление к совершенству, борьба нового со старым, сохранение космического равновесия и т.д.). Национально-традиционные праздники вполне могут стать основой современного национально-государственного календаря, который должен стать обобщением нашего духовного наследия и одновременно возродить сущность нашего государства (национальную или территориальную, религиозную или светскую), а также пройденные нашим народом этапы цивилизации.

Традиционные этнокультурные ценности, в частности, национальные праздники, могут возрождаться только в особых условиях.